ԼՂԻՄ. համագործակցության

հորիզոններ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՆՈՐ ԿՅԱՆՔԸ

Հայաստանի պրոֆտեխկրթության առաջատար կազմակերպիչներն ու մասնագետները Լեռնային Ղարաբաղ էին եկել ոչ դատարկ ձեռքերով: Մայրենի լեզվով հրատարակված հարուստ ուսումնամեթոդական գրականությունը, որը նրանք նվիրեցին արցախցի կոլեգաներին, անկասկած, հրանց կօգնի կատարելագործել ԼՂԻՄ-ի ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի համար որակյալ բանվորական կադրերի պատրաստման պրոցեսը:

Հայրենակիցների այցելությունը ինքնավար մարզ Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի պրոֆտեխուսումնարանների կոլեկտիվների այնքան բաղձալի համագործակցության հիմնաքարը դրեց, ինչի մեծ կարիքն ունեն Արցախի լուսավորության աշխատողները:

Այսպես, օրինակ. Ստեփանակերտի № 159 միջնակարգ տեխնիկական ուսումնարանը արդեն մոտ երկու տարի չի ապահովվում անհրաժեշտ սարքավորումներով և ձեռնարկներով: Ուսումնական հաստատությունը չունի նույնիսկ բուֆետ, չխոսելով արդեն հաշտարանի մասին: Իսկ չէ՞ որ այստեղ ռադիոճեռուստամեխանիկներից, կարող բանվորուհիներից, տեխնիկական պրոֆիլի այլ մասնագետներից բացի պատրաստում են ապագա վաճառողներ, խոհարարներ, հրուշակագործներ: Ավելի քան 250 պատանիներն ու աղջիկները ապրում են երկհարկանի շենքում, հեղվածքի մեջ, հարկ կլինեն չինարարներ հերգրավել, բայց այսօր հրանց վիճակն էլ ծանր է: Շինանյութերի մատակարարումների խրոնիկական ձախողումների պատճառով, ինչը խորացել է երկրամասի ձգձգված շրջափակման կապակցությամբ, դադարեցվել են աշխատանքները քաղաքի կարևոր շատ օբյեկտներում: Մի խոսքով, ուսումնարանի դեկավարությունը մտահոգելու շատ բան ունի:

— Մեզ համար այս դժվարին օրերին Հայաստանից մեր կոլեգաների ժամանումը շատ տեղին եղավ.— Արմենպրեսի թղթակցին ասաց № 159 տեխնիկական ուսումնարանի դիրեկտոր Մելս Թեոսյանը:— Մեր հայրենակիցները ուսումնասիրեցին հաստատությունում տիրող վիճակը, ծանոթացան ուսումնական պրոցեսի դրվածքին, աշխատանքի փորձի փոխանակություն կատարեցին ուսումնական հաստատության դասատուների և վարպետների հետ: Հյուրերը պատրաստակամություն հայտնեցին այսուհետև էլ մեզ գործնական օգնություն ցույց տալ, խոստացան հատկացնել անհրաժեշտ տեխնիկական միջոցներ, այդ թվում ավտոմեքենաներ: Նաև պայմանավորվեցինք, որ ժամանակ առ ժամանակ երևան կուղարկենք մեր սովորողներին, որպեսզի հրանք ավելի մոտիկից ծանոթանան Հայաստանի իրենց հասակակիցների կյանքին և ուսմանը: Նման գործնական էքսկուրսիաները ուսումնարանի սաներին թույլ կտան ավելի արագորեն և ավելի լավ տիրապետել հայոց լեզվին, մանավանդ որ ներկայումս հրանց մեջ քիչ չեն Ադրբեջանից գաղթածները: Այնպես որ մենք լավատեսությամբ ենք հայում վաղվա օրվան: Հիմա գլխավորը անհապաղ խոսքից գործին անցնելն է:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի անփ. թղթ.)
Ստեփանակերտ